



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education

Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent

Matt Hill, Ed.D.

4 June 2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Անցած 10 օրերը շատ դժվար ժամանակաշրջան էր մեր բոլորի համար: Անձամբ ես, ինձ հետապնդված եմ զգում Ջորջ Ֆլոյդի հեռուստատեսային պատկերով, ով սպանվեց ոստիկանի կողմից: Ես անընդհատ հարց էի տալիս ինքս ինձ, թե ի՞նչ կլիներ, եթե Ջորջը ԲԴՄԵ-ի աշակերտ, ծնող կամ աշխատակից լիներ: Արդյո՞ք ես արեցի հնարավոր ամեն ինչ, իմ անձնական և մասնագիտական կյանքում, կանխելու այս տեսակի սպանությունը: Անկեղծ ասաց՝ ոչ: Ես խստորեն հավատում եմ, որ մենք պետք է ավելի գիտակցված լինենք մեր դպրոցներում և համայնքում ռասիզմին և անհավասարությունների շուրջ ծագաց հարցերը լուծելու համար: Որպես մի ամբողջական երկիր, մենք փորձել, բայց ձախտվել ենք: Մենք կարող ենք և պետք է ավելի շատ ջանք թափենք: Մենք պետք է համարձակվենք ազնվությամբ խոսել ռասսայի մասին: Կրթական գրասենյակը հստակ ուշադրություն է դարձնում այն մեր շրջանի նպատակը դարձնելու համար: Մենք սկսել ենք լսել մեր աշակերտների, ծնողների և աշխատակիցների հետ կայացած դեպքերի մասին: Այս աշխատանքը շարունակելու համար, մենք համագործակցում ենք Բրեքենքի ուսուցիչների (BTA) և Կալիֆոռնիայի դպրոցի աշխատակիցների կազմակերպությունների (CSEA) հետ: Մենք որոշ առաջընթաց ենք կատարել, բայց դեռ կանգնած ենք դժվարությունների առջև: Մենք գիտենք, որ տարբեր ռասսայի մեր աշակերտներն ու աշխատակիցները փոքրամասնություն են կազմում: Մենք գիտենք, որ ուսումնական մեր ծրագիրը պետք է ավելի լավ ձևով ներկայացնի այս տարբեր տեսակետները: Մենք գիտենք, որ անհրաժեշտ է շարունակել իրականացնել մշակութային համապատասխան դասավանդում: Այժմ ժամանակն է բաց սրտով և բաց մտքով արագացնել մեր աշխատանքը: Մենք այլևս չպետք է լսենք «Ես չեմ կարողանում շնչել» արտահայտությունը:

Նորություններ բյուջեի վերաբերյալ

Ես և կրթական գրասենյակը ցանկանում է շնորհակալություն հայտնել սենատոր Պորտանտինոյին իր կատարած աշխատանքի և ղեկավարա դիրքի համար: Անցած մի քանի շաբաթների ընթացքում, նա հանդիպեց կրթական գրասենյակի, հարակից դպրոցական շրջանների, Սենատի բյուջեի թիմի, նահանգապետի գրասենյակի և ինձ հետ: Սենատի առաջարկած բյուջեն հիմք հանդիսացավ օրենսդիր մարմինների [առաջարկած բյուջեի](#) համար, որը երեկ հաստատվեց: Ես և կրթական գրասենյակը ցանկանում է շնորհակալություն հայտնել ներկայացուցիչ Ֆրիդմանին իր աջակցության և մեր շահերի պաշտպանության համար: Մեր կատարած գործերը նպաստելի արդյունքի են հանգեցնում: Մենք պետք է շարունակենք էլեկտրոնային փոստի նամակներ ուղարկել նահանգապետին: Պարտադրեք նրան ընդունել

օրենսդիր մարմինների ծրագիրը: **Սեղմել այստեղ օրենսդիր մարմիններին նամակ ուղարկելու համար:** Մեր որոշումը առավելագույն պետական բյուջեի վրա հիմնելու համար, բյուջեի ուսումնասիրության **մեր ժողովի օրը կտեղափոխվի և կկայանա հունիսի 17-ին:** Բյուջեի մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար, սեղմել <https://www.burbankusd.org/2020-21Budget>: Ձեր առաջարկները կարող եք ուղարկել budget@burbankusd.org հասցեին: Վերջում ցանկանում եմ ավելացնել, որ **սեղմելով այստեղ** դուք կկարողանաք դիտել կրթական գրասենյակի ժողովները:

- **Նոր ամսաթիվ. չորեքշաբթի, հունիսի 17-ին, երեկոյան ժ. 7 – ուսումնասիրություն և բյուջե**
- **Հինգշաբթի, հունիսի 18-ին, երեկոյան ժ. 7 – սովորական ժողով, բյուջեի վերաբերյալ**
- **Հինգշաբթի, հունիսի 25-ին, երեկոյան ժ. 7 հատուկ ժողով – բյուջեի ընդունում**

Դպրոցների բացումը 2020-21 ուսուցմանական տարվա ընթացքում

Շնորհակալություն, հեռակա ուսուցման վերաբերյալ հարցաթերթիկին պատասխանելու համար: Հարցաթերթիկին պատասխանելու վերջին օրը կլինի հունիսի 7-ին: Հարցաթերթիկին կարելի է պատասխանել **սեղմելով այստեղ:** Այս շաբաթ, տեղի ունեցավ դպրոցները բացելու կոմիտեի առաջին ժողովը և կատարած աշխատանքները կտեղադրվեն <https://www.burbankusd.org/Reopening> կայքում: Ձեր ակնարկներն ու առաջարկները կարող եք ուղարկել re-opening@burbankusd.org հասցեին:

Շարունակելով աշխատել միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ
գերատեսուչ